

*
*
*

Արնոտ Գողգոթան փարոս իմ ղիմաց,
Քեզ հետ եմ հոգով, իմ թշուառ եղբայր,
Քո հառաչները սրտումս պահած,
Ինձ չէ սարսափում զհշերն ու խաւար:
Երբ որ Ապօլլոնն ինձ քնար տուաւ
Նա եւ հրաման ազատ երգելու,
Քո պատկերն իսկոյն աչքիս կանգնեցաւ,
Ուխտեցի միշտ քո սիրով շնչելու:
Եւ երբ դառնութեան ըստակը լցուած՝
Աչքից արտասուք, քրտինք ճակատից
Դու լուռ թափում ես՝ կարօտով մաշուած,
Ընդ միշտ զրկաբաց քեզ եմ կարեկից:
Փշոտ կածաններ ես անդորր հոգով
Անցնում եմ անվախ եւ միշտ անտրտունջ:
Նենգմիտի հիւսած ոստայն քակելով,
Հնչում եմ սրտիս անմէկին մրմունջ:
Ոյժի քուրմերին հալուէ չեմ ծխում,
Չեմ շոյում ոսկէ կուռքը պաշտողին,
Իմ թոյլ ձեռները միշտ քեզ եմ մեկնում,
Իմ տանջուած եղբայր, միշտ քո վէրքերին:
Չմեռուան զարուն՝ զհշերուան ցերեկ
Միշտ յաջորդում են իրար մրցելով,
Լացին էլ ծիծաղ, ողբին ուրախ երգ
Կը փոխարինեն, օրեր անցնելով:
Արցունքոտ շիրմին ծածկում է կանաչ,
Արնոտ քարերը պմնում ալ վարդով,
Իմ ազնիւ եղբայր, անշուշտ մեր առաջ
Կայ մի հորիզոն կենսավառ շողով:

ԱՐՇԱԿ ԿԱՅԵՌԻՆԻ